

## ԱԼԻՇԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՄԻԶԱԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԲԱՐԲԱՐԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հ. Ղեւոնդ Ալիշանը հայագիտութեան մէջ իր ուրոյն տեղն ու դերն ունի հետազօտողի, ստեղծագործողի խորաթափանց մտքով, գիտական հետաքրքրութիւնների եւ գործունէութեան աներեւակայելի ընդարձակութեամբ, գիտական ու գեղարուեստական հսկայածաւալ ժառանգութեամբ։ Նրա ստեղծած հայագիտական հարուստ շտեմարանը հսկայական նիւթ է մատուցում հետազոտողներին եւ նորանոր եզրայանգումների հնարաւորութիւն տալիս։ Ալիշանի ժառանգութեան մէջ գիտական իրենց հետաքրքրութիւններն ունեն նաեւ բարբառագիտները։

Ինչ խօսք, Հ. Ղեւոնդ Ալիշանը բուն բարբառագիտական բնոյթի որեւէ աշխատութիւն չի հեղինակել, եւ դա բնական է, որովհետեւ ԺԹ. դարի կէսերին հայ իրականութեան մէջ բարբառները, ժողովրդական խօսքն ընդհանրապէս, դեռեւս առանձին եւ հիմնաւոր ուսումնասիրութեան առարկայ չէին դարձել, աւելին՝ շատ յաճախ մերժելի իրողութիւններ էին համարւում։ Սակայն հայ բարբառագիտութեան պատմութեան համար մեծ կարեւորութիւն ունեն Ալիշանի մի շարք գիտարկումներ, հրապարակումներ, որոնց միջոցով հնարաւոր է դառնում նորովի մեկնաբանել բարբառագիտական որոշ հարցեր։ Խօսքը նախ եւ առաջ վերաբերում է «Ազգային երգերու եւ ուրիշ աւանդներու վրայ»<sup>1</sup> յօդուածաշարին եւ «Հայոց երգք ուամկականք» ժողովածուին<sup>2</sup>։ Ալիշանը հանդէս է գալիս որպէս ժողովրդական բանարուեստի, մասնաւորապէս՝ պօէզիայի առաջին գնահատողներից մէկը հայ իրականութեան մէջ։ Նա համզուած էր, որ «ազգի մը պատմութիւնը, բնաւորութիւնները, սովորութիւնները, լեզուն ու լեզուին զանազան

1 ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հայոց երգք ուամկականք, Վենետիկ 1852:

2 Անդ։

փոփոխութիւնները ոչ միայն գրաւոր պատմութիւններէ կիմացուին, հապա նաև ան գրաւոր յիշատակարաններէն առաջ՝ անգիր աւանդութիւններով կհաստատուին»<sup>3</sup>: Այդ համոզումից ելնելով էլ՝ հայագէտը փափագելի է համարում, որ «մեր ազգային ալ ուրիշ բարեկիրք ազգաց պէս վառուէին ազգային աւանդութեանց սիրովը ու ձեռքերենն եկածին չափ ջամային հաւաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, ետք ուրիշներուն ալ հաղորդէին, կամ առանձին տպագրութեամբ եւ կամ ազգային օրագիրներէն մեկուն խրկելով»<sup>4</sup>: Իր փափագը գործադրելու նպատակով էլ Ալիշանը «Բազմավկեպ»ի 1843 թուի 21-րդ համարում ներկայացնում է Վանայ լճում խեղդուած կտրիճի երգը «ան կողմերուն մաքուր լեզուովը»<sup>5</sup>: Ալիշանը բարձր է գնահատում բարբառային լեզուն, ըստ նրա՝ այնքան պարզ եւ գեղեցիկ է բանաստեղծութիւնը, ազդու եւ վառվուուն է ոճը, որ կարդայու ժամանակ մոռացւում է աշխարհաբար լինելը<sup>6</sup>: Բանաստեղծութեան արժանիքները ներկայացնելուն զուգընթաց հայագէտը նաև բարբառային բառերի բացատրութիւն է տալիս, ինչպէս՝ տեխ բառը դեկին է, այսինքն՝ դի, կողմ, դէպի, դնդներ՝ ալիքներն են, սար՝ լեռ, ձիկ՝ զիս<sup>7</sup>: Պտանաւորը անարուեստ է, գրում է Ալիշանը, բայց այդ պատճառով էլ աւելի բնական է: Ռամկական երգը գրեթէ միշտ պարզ եւ ռամիկ լեզուով է գրւում: Հայագէտը եղրակացնում է, որ «այսպիսի բանաստեղծութիւններն են, որ ազգին անարատ ու սկզբնական հանենարը կը հասկցնեն մեզի»<sup>8</sup>: Հստ Ալիշանի՝ թէեւ երգի հեղինակը ուսում առած մէկը չէ, բայց շարադրանքը այնքան լաւ քերականութիւն ունի, որ իմաստունը կարող է ապշեցնելը, որ 1843ին «Բազմավկեպ»ում զետեղուած այս երգը չ։ Աճառեանի կազմած՝ վանի բարբառի մատենագիտութեան մէջ փաստօրէն ներկայանում է իբրեւ բարբառի ամենաւաղ հրապարակուած նմոյշ<sup>10</sup>: Եւ այդ նմոյշը հարազատօրէն ներկայացնում է յետադայում ուսումնասիրողների կողմից դիտարկուած՝ վանի բարբառին բնորոշ այնպիսի յատկանիշներ, ինչպիսիք են բաղաձայների քմայնացումը (գեռոաց, կեայ (կայ), կիւգայ (կօ-

3 ԱԼԻՇԱՆ, Հ. Պ., Երկեր, Էջ 99:

4 Անդ, Էջ 100:

5 Տե՛ս նաև անդ, Էջ 100-101:

6 Անդ:

7 Անդ, Էջ 101:

8 Անդ:

9 Անդ, Էջ 102:

10 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Քննութիւն վաճի բարբառի, Երեւան 1952, Էջ 7:

գայ), ինկեանք (ինկանք)), յատուկ տեղանունների ենթարկուելը Ա. Հոլովման (Վանայ, Աղբամարայ, Ոստանայ), բացառական հոլովի ձեւաւորումը ինչպէս ց-ով, այնպէս էլ է-ով (աւանուց, աչքէս), ներդոյական հոլովի իմաստի արտայայտութիւնը հայցականով (Արուն երակներս կը պաղի), որոշիչ յօդի սահմանափակ կիրառութիւնը (Թուխ ամպեր երկինք պատեցին), անորոշ յօդի յետադաս կիրառութիւնը (գութ մի), անձնական գերանուան տրականի ձիկ ձեւը, բարբառային բառերի ու բառածեւերի գործածութիւնը (տեխ, դնելը, ըսկի, պաղել, քուխ, նամպար) եւ այլն: 1847ի «Բազմավիպ»/թիւ 6 համարում Ալիշանը ներկայացնում է մէկ այլ երգ<sup>11</sup>, որի նիւթը 1605 թուին Շահ Աբասի կողմից հայերի տեղահանութիւնն է դէպի Պարսկաստան: Հայագէտը նշում է, որ երգը շարադրել է Հին Ջուղայի Շամբ անունով գիւղի մօտ գտնուող Նախավկայի վանքից Ստեփան վարդապետը, որը ժամանակակիցն է գաղթի, եւ խօսքից երեւում է, որ ջուղայեցի է<sup>12</sup>: Այլ կերպ ասած՝ Ջուղայի բարբառով այդ նմոյշը, ըստ Ալիշանի, վերաբերում է Ժէղարի սկզբին: Նկատենք, որ 1940ին հրապարակուած «Քննութիւն նոր Ջուղայի բարբառ» աշխատութեան մէջ Հ. Աճառեանը, խօսելով Ջուղայի բարբառով գրուածքների մասին, նշում է, որ եղած բոլոր գրուածքները (որոնցից ամենավաղը՝ «Աղերսագիր հայոց»ը, գրուել է 1658ին, իսկ միւսները հիմնականում ժթ. դարին են վերաբերում), միայն անունով են Ջուղայի բարբառով, բոլորն էլ գրուած են գրական լեզուով՝ պարունակելով որոշ ժողովրդական տարրեր: Աճառեանը եղրակացնում է, որ կարելի է ասել, թէ նոր-Ջուղայի բարբառով գրուածքներ բոլորովին գոյութիւն չունեն<sup>13</sup>: Աճառեանի տեսակէտը յետադայում հաստատում է Ա. Ղարիբեանը<sup>14</sup>: Այսպէս, պէտք է փաստենք, որ հայ բարբառագէտների տեսադաշտից դուրս է մնացել Ալիշանի հրապարակած երգը, որ հարազատօրէն ներկայացնում է Ջուղայի բարբառի այնպիսի յատկանիշներ, ինչպիսիք են՝ հինհայերէնեան հ-ի դիմաց խ-ի առկայութիւնը (խարիւր, խազար, խիմի, խօր, խայրենիք), այ երկբարբառի դիմաց է-ի գործածութիւնը (էս, էսպէս, էնպէս), ման վերջաւորութեամբ անկատար գերբայի կիրառութիւնը (գնաման աֆ, քողման աֆ), ի դէպ՝ Հ. Աճառեանը նշում է, որ ման վերջաւորութեամբ դերբայը յա-

11 Տե՛ս նաև Ա.Լ.ՌԱՆ, Հ. Դ., Երկեր, էջ 106-107:

12 Անդ, էջ 106:

13 Ա.Ճ.Մ.ՌԵ.ԱՆ, Հ., Քննութիւն նոր-Ջուղայի բարբառի, Երեւան 1940, էջ 39-40:

14 ՂԱՐԻԲԵԱՆ, Ա., Հայ բարբառագիտութիւն, Երեւան 1953, էջ 254:

տուկ է միայն Զուղայի բարբառին: Զուղայի բարբառում եմ օժանդակ բայի ձեւերն են՝ ամ, աս, ա, անք, աք, ան, որոնք իրենց դրսեւրում ունեն դիտուող երգում (մոռանում աք, վախում ամ): Ասուածը մեզ թոյլ է տալիս վստահաբար արձանագրել, որ դիտուող երգը Զուղայի բարբառով մեզ հասած ամենավաղ նմոյշն է:

Ցողուածաշարի յօդուածներից մէկում էլ Ալիշանն անդրադառնում է առածներին ու ասացուածքներին<sup>15</sup>, նշում, որ ազգի մէջ գործածուող առակներն ու առակի պէս կարճ խօսքերը պէտք է համարուեն ազգի բարոյական համառօտ նկարագիրը<sup>16</sup>: Ուստի կարեւոր է, որ դրանք եւս հաւաքուեն ու տպուեն: Հայագէտը մէջբերում է Հայաստանից ուղարկուած առածները<sup>17</sup>, որոնց մէծ մասը, իդէպ, վերաբերում են Արարատեան բարբառին, ինչպէս՝

Ծունը շան միսը չի ուտիլ.

Պստիկ է, բայց նատիկ է.

Քարը քարին բնես՝ կրակ դուրս կը գայ.

Ով չուստ՝ նա կուշու.

Պանիր ու հաց՝ սիրտը բաց.

Բդաւան կատուն մուկ չի բռնիլ.

Խուփը գլորուել ա, կնութը գտել ա.

Գող՝ սրտումը դող եւ այլն:

Այս հատուածը ամփոփելով՝ նկատենք, որ ի հարկէ, Ալիշանը ժողովրդական կամ ուամկական լեզուն առաւել չի համարում, քան բարձր, վսեմ եւ գեղեցիկ գրաբարն է: Եւ դա յաճախ երեւում է նրա այն դիտարկումներից, թէ գրուածքը թէեւ ժողովրդական պարզ լեզուով է գրուած, բայց արժէքաւոր է: Խընդիրն այն է, որ Ալիշանը չի հակադրում ուամկօրէնը գրաբարին, չի մերժում նրա գոյութեան իրաւունքը, այլ արժեւորում է, չի ճանաչել եւ գնահատել, իսկ ժամանակի համար նման փորձում է ճանաչել եւ գնահատել, իսկ ժամանակի համար նման մօտեցումը արդարացի էր եւ խիստ առաջադիմական:

Խորապէս գնահատելով ժողովրդական բառ ու բանը, հայ հանրութեանը յորդորելով զբաղուել ազգային երգերի, ժողովրդական առակների, առածների ու ասացուածքների, աւանդութիւնների հաւաքմամբ եւ ուսումնասիրութեամբ՝ Ալիշանը առաջինքն է զբաղւում այդ գործով: Նա վենետիկի, Փարիզի, Լոնտոնի, Վիեննայի մատենադարանների հայկական գրչագիր մա-

15 Տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Երկեր, 62. աշխ., էջ 107:

16 Անդ:

17 Անդ, էջ 108:

**տեաններում տարբեր ժամանակներում գրի առնուած ժողովրդական երգերի մի փունջ 1852ին հրատարակում է Հայերէն եւ անդլերէն՝ «Հայոց երգի ոամկական» խորագրով։ Ծանօթագրութիւններում նշում է, որ տարբեր բարեառներ ներկայացնող երգերն ստեղծուել են ԺԳ.-ԺԴ. դարերից մինչեւ ԺԷ. դարը, եւ դրանց մեծ մասը ինքը քաղել է Սուրբ Ղազարի գրադարանի ձեռագրերից<sup>18</sup>։ Ժողովածուում ընդգրկուած են 19 երգեր, որոնցից 11ի լեզուն միջին հայերէնն է։ Բացի «Բագմավէպ»ում հրապարակուած վերոյիշեալ երգը (այն կրում է «ի նաւակոնծեալն ի ծովուն Վանայ» խորագիրը), ժողովածուում ընդգրկուած են Վանի բարբառով գրուած եւս երկու երգեր՝ «Երգ կաֆաւու»<sup>19</sup> եւ «Երգ արագլի»<sup>20</sup> խորագրերով, ընդ որում՝ առաջինը կոմիտասեան «կաֆալիկ» երգի մի տարբերակն է։ Այս երգերում նոյնպէս Վանի բարբառի յատկանիշները յատակ արտայայտուած են։ Այսպէս, առկայ են քըմայնացած ձայնաւորներ՝ ու բաղաձայններ՝ կեաֆեաւ (կաֆաւ), տիւս (տօս), կիւկան (կծկան), հինհայերէննեան ոյ երկբարբառի դիմաց գործածում է քմայնացած թ (թեռն (թին), գեօն (գին)), հ-ի դիմաց հանդիպում է խ (խաց), գործածուել են գերանուան ըմէ, մեզի, թէ, թեզի ձեւեր, յատկացուցիչը ստանում է որոշիչ յօդ՝ սարին ծէրէն, դարին վերէն, գործածուել են բարբառային բնորոշ բառեր (խորտիկ, իրիշկել, կրկրալ, պզտիկ, նըլուռլ, աղուռիկի, ըմէն, ըսկի, երկէն) եւ այլն։ Ի դէպ, ծանօթագրութիւններում Ալիշանը նշում է, որ Վանի մարդիկ յատուկ բանստեղծական չնորհք ունեն, եւ բերուած երգերը նմոյշներ են նրանց ժողովրդական լեզուի եւ բանստեղծութեան<sup>21</sup>։ Ժողովածուում ընդգրկուած երկու երգեր էլ «Երգ հարսին»<sup>22</sup> եւ «Երգ հարսանեաց փեսայի»<sup>23</sup> վերնագրերով, թերեւս ներկայացնում են Մշոյ բարբառի խօսուածքներ։ Այս երգերում դրանեւորուել են Մշոյ բարբառի այնպիսի յատկանիշներ, ինչպիսիք են՝ բազմավանկ բառերի միջնավանկի ձայնաւորի սղումը (թագւոր, կաֆըներ, նըննըներ, մըշկըներ, ալըրք-աբ-ախ, ջաղցըպան), ոյ երկբարբառի դիմաց ու-ի գործածութիւնը (քուր), ութիւն ածանցի ութեն հնչատարբերակի կիրառութիւնը (զօրութեն), դերանուան իւրայատուկ ձեւերի առկայութիւնը (դուն, թու, թեզի), անո-**

18 Տե՛ս ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հայոց երգի ոամկական, նշ. աշխ., էջ 83։

19 Անդ, էջ 57-59։

20 Անդ, էջ 61-63։

21 Անդ, էջ 85։

22 Անդ, էջ 37-41։

23 Անդ, էջ 41-47։

ըուշ յօդի յետաղաս գործածութիւնը (կուռէ մը, քագւոր մը), զ նախդրի կիրառութիւնը (զիսաչ, զկոռւնկնի), անուանական բնորոշ ձեւերի առկայութիւնը (դիզան, ուր՝ իր, որը՝ ով), բայական բնորոշ ձեւերի առկայութիւնը (գացէք, իգայ, պիտէր, էնէ, կիգէր) եւ այլն: Երգերում զգալի քանակութեան բարբառային բառեր ու արտայայտութիւններ կան, ինչպէս՝ տախրիկ, հերիկ, մերիկ, աղրիկ, յանգուրց, ջոկել, նամբայ, տերիկ, կըրալ, չոլ, ֆաս, խարիկ, քէտ, յերճ ու քարին, սէյրան անել եւ այլն: Հետաքրքրական է, որ երգերից երկրորդում առկայ է մի հատուած, որտեղ գործածում են նև ճիւղի բարբառներին յատուկ բայական ձեւեր, ինչպէս՝ մըրմըրալ էն, կըրկըրալ էն, ճըլւըստալ էն: Երգերից մէկի վերաբերեալ Ալիշանը ծանօթագրութիւններում գրել է, որ տարբերակները շատ բազմազան էին, եւ իր ներկայացրածը դրանցից կազմուած միջին մի տարբերակ է<sup>24</sup>: Հնարաւոր է, որ «Երգ հարսանեաց փեսայի» երգում յիշեալ հատուածը յայտնուել է նոյն ճանապարհով: Եւ վերջապէս, «Հայոց երգի ու ամկականք» ժողովածուում ընդգրկուած երգերից երկուսը՝ «Սուր դստեր մեծի իշխանի»<sup>25</sup> եւ «Երգ երեխայից»<sup>26</sup> վերնագրերով, ներկայացնում են Արարատեան բարբառի մի տարբերակ: Այդ են վկայում հնչիւնական իրողութիւնները (ես, էսօր, լուս), ներկայի կազմութիւնը (ինչ ես ասում, չեմ հասկանում, գրում եր, լալում էին, խաղում էին), բայական այլ ձեւեր (սեւ եր դառել, դրած եր, չեմ տեսած), բառային միաւորներ ու արտայայտութիւններ (ձարբդ կտրած, կրօնեն, լեզուդ սեւնայ, բերանդ չորնայ, մէրիկ, սեւ բաղդ, մինակ, վոնց, հերիք, մին) եւ այլն: Յաւելենք, որ ժողովածուում ընդգրկուած է նաեւ վերեւում յիշատակուած՝ ջուղայի բարբառով գրուած երգը՝ «Ողբ Ձուղայեցւոց» վերնագրով:

Այսպէս, Հ. Ղ. Ալիշանը բարբառային հայերէնի արժեւորման եւ ուսումնասիրման համար ուղի հարթող առաջին հայագէտներից մէկն է, որը նաեւ արձանագրել եւ սերունդներին է փոխանցել բարբառագիտական հետազօտութիւնների համար գիտական կարեւոր նշանակութիւն ունեցող արժէքաւոր նիւթ:

#### ՎԻԿՏՈՐ ԿԱՏՈՒԱԼԵԱՆ

24 Անդ, էջ 84:

25 Անդ, էջ 7-11:

26 Անդ, էջ 69:

**Summary****ALISHAN'S ROLE IN STUDYING THE DIALECT LAYER OF ARMENIAN MEDIEVAL POETRY**

VICTOR KATVALYAN

A number of observations, comments and publications of Alishan are of great importance for the history of Armenian dialectology. Alishan was one of the first Armenologists who paved the way for the assessment and study of the dialectal Armenian language; he also recorded and passed on to future generations valuable material for dialectological research. The song "*Lament of Julfa*", published by Alishan in 1847 in the 6th issue of *Bazmavep*, is the earliest example in the Julfa dialect, and the song presented by Alishan in the 21<sup>st</sup> issue of *Bazmavep* (1843) is the earliest registered sample of the Van dialect. In the collection "*Armenian Popular Songs*" Alishan also included songs in the dialects of Mush and Ararat, these songs are also important for studying the development of the dialectal Armenian language.